

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 21

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

30.09.2019թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Գ.Մարկոսյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ա.Մխիթարյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Է.Հախվերդյանը, Ա.Շահվերդյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղոյանը, Ա.Գասպարյանը, Հ.Մկրտչյանը, Ն.Համբարձումյանը - ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Հ.Այվազյանը - մարզպետի խորհրդական
- Ռ.Խանզադյանը - մարզպետի օգնական
- Ն.Հովհաննիսյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ՝

1. Սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին : (զեկ.՝ Հ.Պապոյան)
2. 2.1 Ճանապարհաշինարարական աշխատանքների ընթացքի մասին (միջպետական, հանրապետական, մարզային, համայնքային), ինչպես նաև ասֆալտի քերուկի և եզրաքարերի վերաբաշխման մասին :
2.2 Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների, շինարարական ավարտական ակտերի ստորագրման մասին : (զեկ. Ա. Ջանազյան)
3. Բերքի տոնի նախապատրաստական աշխատանքների և Հարգիտա նահանգի պատվիրակության այցի մասին: (զեկ.՝ Գ.Մարկոսյան)
4. 4.1 Սուբվենցիոն ծրագրերի ընթացքի մասին :
4.2 Տարածքների համաչափ զարգացման հարթակի մասին: (զեկ.՝ Հ. Մկրտչյան)
5. 5.1 Ավագանու նիստերի անցկացման ժամանակացույցի մասին:
5.2 Ամսի 29-ին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին: (զեկ.՝ Դ. Մանուչարյան)
6. Դպրոցների տանիքների և վառելափայտի համար պահանջվող գումարի մոտավոր հաշվարկի մասին : (զեկ.՝ Ռ. Հարությունյան)
7. Բուժհաստատություններում տիրող ապօրինի դրամաշրջանառության և դրա դեմ տարվող աշխատանքների մասին: (զեկ.՝ Ա.Մխիթարյան)

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետ Հ.Պապոյանին՝

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների բարելավման ուղղությամբ և մեկամսյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին՝

Ճանապարհաշինարարական աշխատանքների ընթացքի, ինչպես նաև վերանորոգման վերաբերյալ առաջացած խնդիրների վերաբերյալ պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին, մարզպետի օգնական Նոնա Հովհաննիսյանին՝

Ուսումնասիրել մարզպետարանի կայք-էջի բոլոր բաժինները, ենթաբաժինները և տեղեկատվությունը, անհրաժեշտ թարմացումներ իրականացնել և պարբերաբար վերահսկել տեղեկատվության տեղադրման և այլ աշխատանքների իրականացումը:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին՝

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից Ստեփանակերտում ս/թ հոկտեմբերի 13-ին անցկացվելիք «Բերքի տոնի» միջոցառման հնարավոր մասնակցության ապահովման ուղղությամբ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

Ներկայացնել տեղեկատվություն մարզի համայնքների ավագանու վերջին նիստերի հրավիրման և անցկացման վերաբերյալ:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ռ.Հարությունյանին՝

Ներկայացնել տեղեկատվություն վառելափայտով ջեռուցվող դպրոցների քանակի և վառելափայտի պահանջարկի վերաբերյալ:

7. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ա.Մխիթարյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել բուժհաստատություններում ապօրինի դրամաշրջանառության կանխման և դրա դեմ պայքար իրականացնելու ուղղությամբ:

 Invalid signature

X 
ԱՄՔԱՆՈՒՄԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ